EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

23 փետրվարի, 2012թ.

Մամլո հաղորդագրություն
Press release
Գրքի համահայկական ցուցահանդես-տոնավաճառ Երևանում

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ հայ գրատպության 500-ամյակի և «2012 թվականին՝ Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում ս.թ. ապրիլի 21-ից 23-ը Երևանում անցկացվելու է գրքի համահայկական ցուցահանդես-տոնավաճառ, որին ներկայացված են լինելու հայ և օտարազգի հրատարակիչների կողմից վերջին երկու տարիներին հայկական թեմատիկայով հրատարակված հայերեն և օտարալեզու գրքեր: Ցուցահանդեսում յուրաքանչյուր երկիր ներկայացված է լինելու առանձին տաղավարով: Տաղավարները տրամադրվում են անվճար:

Սփյուռքի այն հրատարակչությունները, որոնք արդեն գրքեր են տրամադրել ցուցահանդեսին, բայց ցանկանում են ավելացնել նորերը, կամ, որոնք նոր են որոշել մասնակցել ցուցահանդեսին, կարող են գրքերը բերել իրենց հետ:

Անհրաժեշտության դեպքում, հայկական կողմը կարող է ցուցահանդեսին ժամանող հյուրերին աջակցել դիմավորման և ճանապարհման, ինչպես նաև հյուրանոցների ամրագրման հարցում, իսկ ճանապարհածախսի, կեցության, ինչպես նաև գրքերի տեղափոխման հետ կապված ծախսերը հոգալու են մասնակիցները:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Մշակույթի նախարարի օգնական, միջոցառման համակարգող Լուսինե Քարամյանին. հեռախոս՝ 37410-529307, էլ.փոստ՝ lusyqaramyan@yahoo.com:

Առդիր ներկայացնում ենք ծրագրի նախագիծը՝ 2 էջ:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613.234.3710 Fax: 613.234.3444

ԳՐՔԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ_ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ
ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

2012 թ. ապրիլի 21-23
/Երևան, Հայաստանի նկարիչների միության սրահներում/

Սփյուռքի հրատարակիչները Երևան կժամանեն ապրիլի 19-20-ին: Անհրաժեշտության դեպքում ՀԱԱ ՀԿ-ի ներկայացուցիչները նրանց կդիմավորեն և կուղեկցեն ըստ հասցեների:

ԱՊՐԻԼԻ 21

10:00 Տոնավաճառը կսկսի գործել այցելուների համար:

14:00 Տոնավաճառի հանդիսավոր բացումը: Մշակութային ծրագիր՝ Հայաստանի նկարիչների միության հարակից Շառլ Ազնավուրի անվան հրապարակում:

15:30 << Գրքի ճանապարհը. Հայ հրատարակիչների խնդիրները ժամանակակից աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու գործում>> կոնֆերանսի սկիզբը /նկարիչների միության 3-րդ հարկի սրահում:

17:30 Այցելություն Երևանի **<<Բուկինիստ>>** գրատուն: Կլոր սեղան՝ <<Սփյուռքի և ՀՀ հրատարակիչների ու գրավաճառների փոխշահավետ համագործակցության ներկան և հեռանկարները>>
թեմայով

ԱՊՐԻԼԻ 22

10::00 Տոնավաճառը կշարունակի աշխատանքը:

11:00-17:00 Գրքի շնորհանդեսներ 2-րդ հարկի <<Գրական հարթակում>>՝ ըստ ժամանակացույցի:
/Հրատարակչությունների, հեղինակների ու գրքանունների անվանացանկերը կճշտվեն փետրվարի վերջին/:

Հընթացս՝
Հրատարակիչների և գրավաճառների գործնական հանդիպումներ, բանակցություններ, փոխադարձ թարգմանական ծրագրերի քննարկումներ, համատեղ ձեռներեցության, հեղինակային

իրավունքների գնման և վաճառքի համաձայնագրերի ու պայմանագրերի կնքում:

/Տոնավաճառի մասնակիցներ/

Մասնակցություն <<Գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օրվան>>, <<Հայկական տպագրության 500- ամյակին և Երևանը <<Գրքի 2012 թ. համաշխարհային մայրաքաղաք>> հռչակելու հանդիսավոր արարողությանը:

/Համաձայն ՀՀ մշակույթի նախարարության ծրագրի/:

17:00 Կլոր սեղան՝ <<Ընթերցանության խորը ճգնաժամի պայմաններում հրատարակչական, տպագրական և գրավաճառ խոշոր համալիր ունեցող ընկերությունների հաջողության ապահովման բաղադրիչները>> թեմայով:

/.....Հրատարակչատպագրական համալիր/

ԱՊՐԻԼԻ 23

10::00 Տոնավաճառը կշարունակի աշխատանքը:

Մասնակցություն <<Գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օրվան>>, <<Հայկական տպագրության 500- ամյակին և Երևանը <<Գրքի 2012 թ. համաշխարհային մայրաքաղաք>> հռչակելու հանդիսավոր արարողությանը:

/Համաձայն ՀՀ մշակույթի նախարարության ծրագրի/:

16:00 Տոնավաճառի արդյունքների ամփոփում:

Շրջագայություն և այցելություն մայրաքաղաքի նորաբաց գրատուն:

Հրաժեշտի երեկույթ:

ԱՊՐԻԼԻ 24

Այցելություն Հայոց Մեծ Եղեռնի հուշահամալիր:

Ցեղասպանության թանգարան-ինստիտուտում կազմակերպված գրքերի ցուցադրության դիտում: